Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ
Կուտակային կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունն
առ 30.06.2022թ.

2022թ. երկրորդ եռամսյակում միջազգային ֆինանսական շուկաները շարունակել են կրել այն բացասական ազդեցությունը, որը պայմանավորված էր համաշխարհային մատակարարման շղթաների խաթարումներով, հատկապես ռուս-ուկրաինական հակամարտությունից հետո, որը բերեց տնտեսական հեռանկարների մասով անորոշությունների մեծացմանը: Արդյունքում՝ ս.թ. առաջին կիսամյակի արդյունքներով գրեթե բոլոր ակտիվների դասերն արձանագրեցին բացասական եկամտաբերություն (քիչ բացառություններից էին թերևս հումքային ապրանքները)[1]:



Ամունդի-Ակբայի կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերն անմասն չմնացին վերը նկարագրված իրադարձություններից՝ 2022թ. առաջին կիսամյակի արդյունքներով արձանագրելով եկամտաբերության հետևյալ ցուցանիշները՝

- -5.1% կայուն եկամտային ֆոնդ (AMFIX)
- -9.3% պահպանողական ֆոնդ (AMCON)
- -10.4% հավասարակշռված ֆոնդ (AMBAL):

Ֆոնդերի բացասական եկամտաբերությունը պայմանավորված է եղել արտասահմանյան բաժնետոմսերի գների, արտասահմանյան և հայաստանյան պարտատոմսերի գների, ինչպես

[1] Աղբյուրը՝ Ամունդի հետազոտական կենտրոն:

նաև ԱՄՆ դոլար և եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի կտրուկ արժևորմամբ: Վերջինիս բացասական ազդեցությունը որոշակի մեղմվել է Ամունդի-Ակբայի կողմից կենսաթոշակային ֆոնդերի հայաստանյան ներդրումների կառավարման մեջ առաջին անգամ հեջավորման գործիքի կիրառման արդյունքում:

Կարևոր է նշել նաև, որ ֆոնդերի՝ ս.թ. առաջին կիսամյակում արձանագրած վնասները իրացված չեն, այսինքն այդ վնասները չեն ձևավորվել ֆոնդերի ներդրումների վաճառքի արդյունքում: Սա նշանակում է, որ ֆինանսական շուկաների վերականգնման պայմաններում ֆոնդերի եկամտաբերության ցուցանիշները ևս կվերականգնվեն: Ավելին, տարբեր արժեթղթերի գների ցածր մակարդակը ֆոնդերին հնարավորություն են ընձեռում նոր ներդրումներն իրականացնել առավել նպաստավոր պայմաններով՝ բերելով ֆոնդի եկամտաբերության առաջանցիկ աճին, ֆինանսական շուկաների վերականգնմանը զուգահեռ: Բացի այդ, ներկա պահին ապագա կենսաթոշակառուների կողմից հատկացվող միջոցների կուտակման փուլն է, ուստի մասնակիցները կենսաթոշակ ստանալու նպատակով ստիպված չեն ֆոնդի իրենց փայերը մարել ցածր արժեքով:

Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների կառավարումն ունի երկարաժամկետ ռազմավարություն, և հետևաբար դրանց եկամտաբերությունը անհրաժեշտ է դիտարկել երկարաժամկետ կտրվածքով: Ըստ այդմ, Ամունդի-Ակբայի կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերը ստեղծման պահից (2014թ.) մինչ օրս ապահովել են 72-76% կուտակային եկամտաբերություն, որը համարժեք է ստեղծման պահից միջին տարեկան 6.8-7.0% եկամտաբերության՝ կախված ֆոնդի տեսակից[2]:

Եթե նշված եկամտաբերությունը վերածենք դրամային արտահայտության, ապա այն կկազմի շուրջ 22 մլրդ դրամ եկամուտ[3]:



[2] Ֆոնդի եկամտաբերության նախկին ցուցանիշները չեն հանդիսանում հստակ կողմնորոշիչ ընթացիկ կամ ապագա եկամտաբերության ցուցանիշների համար:
[3] Ֆոնդերի եկամտաբերությունը հրապարակվում է amundi-acba.am-ում:

Ինչպես ներկայացված է ստորև բերված գծապատկերում՝ տարբեր իրադարձություններով պայմանավորված, նախկինում ևս ֆոնդերն արձանագրել են եռամսյակային բացասական եկամտաբերություն, սակայն նշված բոլոր դեպքերին հաջորդել են եկամտաբերության աճի երկար ժամանակահատվածներ:



Այսպիսով, կարող ենք ամփոփել.

- կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունը պետք է գնահատել երկարաժամկետ հատվածում, որը հնարավորություն է տալիս չեզոքացնել կարճաժամկետ տատանումների բացասական ազդեցությունը եկամտաբերության վրա,
- դիվերսիֆիկացիան և ներդրումային ռիսկերի նվազեցման նոր գործիքի կիրառումը հնարավորություն են տվել մեղմել բացասական ազդեցությունը ֆոնդերի եկամտաբերության վրա,
- տարբեր արժեթղթերի գների ցածր մակարդակը ֆոնդերին հնարավորություն են ընձեռում նոր ներդրումներն իրականացնել առավել նպաստավոր պայմաններով,
- ֆոնդերի՝ ս.թ. առաջին կիսամյակում արձանագրած վնասները իրացված չեն, և կուտակային կենսաթոշակային համակարգի շահառուները կենսաթոշակ ստանալու նպատակով ստիպված չեն ֆոնդի իրենց փայերը մարել ցածր արժեքով: